ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն առաջարկների նպատակը ներկայացված օրենքի նախագծի բարեփոխումն է, որի հիմքում ընկած են անձի՝ տվյալ դեպքում պետական պաշտոնատար անձի՝ որոշակի պաշտոնի անցնելով պայմանավորած օբյեկտիվ ակնկալիքի արդյունավետ ապահովումն է, անձի՝ իրավական վիճակը վատթարացնող նորմատիվ-իրավական ակտի հետադարձ ուժի արգելքի երաշխավորումը և դրանով իսկ պայմանավորված օրինականության սկզբունքի համընդհանուր պահպանումը:

Հարկ է նշել, որ առաջարկներով միատեսակ պայմաններ են սահմանվել Մարդու իրավունքների պաշտպանի և գլխավոր դատախազի համար՝ պայմանավորված նրանց բացառիկ պետական լիազորություններով և այդպիսի լիազորություններով նրանց օժտելու նպատակով, ինչով էլ պայմանավորված սույն առաջարկի հեղինակների կողմից նախատեսվում է միասնական կենսաթոշակային պայմաններ ապահովել պետական անկյունաքարային այս պաշտոնները զբաղեցնող անձանց համար: